19. ՓՈԿՈՏՆ

Առաջի ժամանակ մե թաքավոր կար. էդ թաքավոր ըսկի ավյատ չուներ. մեկ օր նստավ ուր թախտի վրեն, միտք արաց. «Տեր աստված,— ասաց,— դու էս թաքավորութեն ընձի տվեր ես, ավյատ չես տվեր, խնդիրք կանեմ քեզնից, իմ թաքավորութեն վերցնես, ընձի ավյատ տաս»։

Աստված ըդու ձեն լսեց. թաքավորութենը քիչ-քիչ պակսավ, ըդու մե ավյատ տվեց։

Տղեն ջոջըցավ, թաքավորը բերեց, կարգեց։

Թաքավորը որ մեռավ, էս տղեն սկսեց բեռնախութեն [1], ընկերաիք ժողվեց, տարավ ուր մալ ընկերտոցը կերցրեց, խատցրեց, փճացրեց։

Մե օր՝ ընկերտանքը ժողվան, գացին ուտել խմելու. թաքավորի տղեն քամակներեն գնաց. ըդու տարան խետընները. նստան, կերան, խմեցին, էլան ցրվըվան։

Էն մեկել օրն էլ էլան գնացին, թաքավորի տղեն էլի քամակից գնաց. ընկերտոցը մեկը դարձավ թաքավորի տղին.

---

1 Հայրենական ավանդությանց անհավատարիմ գտնվիլ (Ս. Բ.)։

— Տո՛, զուռումսաղ. էրեկ սորվա՞ր, պատիհավա կերար, խմեցիր, փարա ունես՝ արի՛ մեր խետ ընկեր էղի, թե չունես՝ թորկ գնա՛,— ասաց։

Տղեն էր, սիրտը լցվավ, աչքերեն արտրսուք թափեց. էկավ ուր տունը, քիթ ու բերնի վրեն ընկավ։

Մերը տուն էկավ, տեսավ որ տղեն էդպեսդ ընկեր ա.

— Որդի՛,— ասաց,— հ՚ինչի՞ էդպեսդ ընկեր ես։

— Ա՞խ նանե, իմ դարտ շատ ա։

— Հ՚ինչի՞ խամա, որդի՛։

— Գնացի իմ ընկերտանքին խետ, ընձի խրկին։

— Որդի՛, էն օրը որ ես քեզի ասըմ ի էդմալ մի՛ անե, դու ընձի ականջ չարիր. քաշա՛, ջանդ դուս ըլլի։

Տղեն կծկծուն իրեք տարի խիվընդցավ։

Մեկ օր միտք արավ. «Տե՛ր աստված,— ասաց,— էս նեղութենից ընձի աղատա՛. ուխտ անեմ, դամ Երուսաղեմ, ուխտս կատարեմ»։

Մե քանի օր մնաց, էլավ յավաշ-յավաշ փետը ձեռը առավ, ըստեղ, ընտեղ պըտրտրմ էր. տեսավ մե բաղրկյան էկավ, քաղաքի ղրաղը գրավ. գնաց բաղրկյանի մոտ, դլոխ տվեց, ձեռ քաշեց, կաղնավ։

— Որդի՛, ի՞նչ ես ասըմ,— ասաց բաղրկյանը։

— Բան չեմ ասըմ,— խնդրըմ եմ,— ասաց,— քո հոգու սատաղեն՝ ընձի տանիս խետդ Երուսաղեմ։

— Որդի՛, լավ ես ասըմ,— ասաց բաղրկյան։

Իրեք օր գնաց, միտք արաց բաղրկյան. «Ես էսի բերեցի, որ ընձի օգուտ ըլլի. տահա ավելի իմ բեռը ծանտրցավ»։

Գիշերը քնան. բաղրկյան էդ տղին թողեց ու ուր ղավլաղաթը[1] բարձավ, ընկավ ճանպախ, գնաց։

Տղեն հ՚իմցավ որ լուս ա, բաղրկյան չկա. հ՚էլավ ըստեղ, ընտեղ պըտրտեց, մե բարակ ճանպախ ընկավ առաջ, գնաց։ Շատն ու քիչ աստված գինա, գնաց տեհավ մե սարի մեջ մե հովիվ, ուր օխչարը արածացընըմ ա, ասաց. «Անոթի եմ, էթամ էս հովիվի կուշտը, մե կտոր խաց ուտեմ»։

Խասավ, չոպնին բարև տվեց։

---

[1] Ջորի, ջորեստան-բեռ (Ս. Բ.)։

— Բարո՛վ էկար... վըր իմ գլխին, վըր իմ աչքին, վըր իմ հ՚էրսին էկար. խացս խլըսեր ա, արի՛, խեծի էշը, էթանք տունը, քըզի լավ պատիվ կանեմ։

Էս հովիվը քելլե-գյոզ էր, տգին դրեց իշու վրեն. ոտները փորի տակ կապեց, օխշարը ժողվեց, տվեց առաջը, տարավ ուր էրը. տղին տարավ վերևը. օտները գրեց զնճիլ, կապեց։

Էս քելլե-գյոզը էկավ ուր փուռը վառեց։

Էն տեղ էռսուն կապված մարդ կար, տղեն ընդոնց խարցրեց.

— Էս ի՞նչ բան ա։

— Քո տուն ակոլի, դո՞ւն էլ էկար էս տեղ. օրը մե մա՛րդ ոտում ա։

Փուռը վառեց, նիզեն[1] գրեց կրակը. կարմրավ, բերեց կոխեց մեկ մարդի սրտին մեջ, առավ գնաց, բռնեց փոռի վրեն, էփեց կերավ. ընտեղ մե գուռ ջուր ուներ, խմեց, ու վըր քամկին քնավ։

Թաքավորի տղեն ուր ընկերտանքին ասաց.— Ըդու մե ճար չե՞ք դտնըմ։

— Չէ՛,— ասեցին ընկերտանքը։

Տղեն ուր ձեռներու կապեր քանդել տվեց, ուր ընկերտանքին օտի զնճիլը կոտրեց, էկավ նիզեն փոռի միջեն խանեց, քնուկ տեղ տարավ գրավ ըդու աչքի վրեն. որ ճխտեց, աչքը փլխավ, գնաց, մի թիզ մտավ մըջ օխշրի տարթին։

Օր փլխավ աչքը, պոռաց.— Թաքավորի տղա՛, էսի քո բանեբրն ա։

Էլավ էս էրի մեջ ընկավ տգի հ՚ետևը լափլըփելեն, ըստեղ-ընտեղ լարեց, չկարցավ բռներ. էկավ ինատ արաց, ջաղջի քարը օխշրրի դռնից վերցրեց. մե օտը դրեց շեմի էն տեղ, մե օտը էս տեղ. օխշրրների անուն տվեց.— Սև օխշար, Սիպտակ օխշար, արի՛. Կարմիր օխշար, արի՛։

Օխշրրները մեկ-մեկ էկան էս քելլե-գյոզի շենքի տրկով ընցան, դուս էկան։

Թաքավորի տղեն տեսավ, որ ըդու մե ների կա, ալպիալը ըդու փորը թափեց. ներուն օր կանչեց «Սիպտակ սեյիդ, արի՛», տղեն մտավ ներու փորը, էկավ ըդու շենքի տակեն ընցավ, կանչեց.

— Ա՛յ քո հերն անիծած, տեսա՞ր, քո ձեռքեն պրծա։

---

[1] Նիզակը (Ս. Բ.)։

Քելլե-գյոզն որ ըդու ձենը առավ, հերսոտ ընկավ ձենի էտև, ըդու էրի առջև մե զնար կար. տղեն գնաց էգ զնարի գլոխը, ձեն տվեց, ետ փախավ. քելլե-գյոզն ձենի վրեն դնաց որ բռներ, պատավ, էլավ հազար կտոր։

Գնաց իջավ վրեն, տեսավ ըդու յախին մե կորալ փետ կա, հ'ըմեն անգին քարով նղշված. վերցրեց կորալն, էկավ, մտավ էրն. գնաց կապած ընկերտանքի կուշտ.

— Աչքներդ լուսի, սրպանեցի,— ասաց։

Էլան ըդոնք թափան տղի ոտի վրեն, ուրխրցան։

Տղեն բերեց, ըդոց հարձկեց։

Գացին օխշարը ժողվեցին, ըդու էդ էրի մեջ բերած ապրանքը ըմեն դուս բերին. թաքավորի տղեն փայ էրավ. ուրին փայ չառավ։

— Աղբեր,— ասեցին,— էս հ'ըմեն քոն ա. դու ընչի՞ փայ չես առնում։

— Էդի ձեր արընի գինն ա, ձեզի ըլլի. էս մե կորալը թե ոչ կուտաք ընձի, կըտանեմ։

— Խալալ ըլլի քեզի, դո՛ւ մեզի ազատեցիր։

Իրար խալալլաշմիշ էղան, հ'իրարուց բաժանվան, ասին թաքավորի տղին.

— Աստված քո խե՛տն ըլլի. գնա՛։

Տղեն ընկավ մե բարակ ճանբախ, գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, խասավ մե մեշի[1] մեջ։ Կեսօր էր, նըստավ խաց կերավ, ուզեց որ քներ, ասաց. «Թե քնեմ, արի տե՛ս, ջանավարները գան, ընձի գետինը ուտեն»։ Հ'էլավ մե ջոջ ծառի վրեն, ուզեց որ քներ. տեսավ որ սարից մե վերու եզ իջավ. էկավ, էդտեղ մե ջրի հավուզ[2] կար, իջավ վրեն, բերնից մե ջավահիրաթ քար խանեց, դրեց դետին, ջուրը խմեց. էն քարը ղուլ տվեց գնաց։

Տղեն ասաց.— Ես մեռնեմ, չանք էս քարը էս եզան ձեռնեն չառնեմ, ըստուց չեմ էթա։

Հ'իջավ ծառից, իրեք խատ տլից խուփ շքեց, առավ էլավ ծառի գլոխ, նստավ։

Մնաց էն մեկել օրը, եզը էլի էկավ հավուզի վրեն. բերնից քարը խանեց, որ կզավ ջրի վրեն՝ ջուրը խմըմ էր, տղեն խփները մեկ-

---

[1] Անտառ (Ս. Բ.)։

[2] Գուռ (Ս. Բ.)։ Ջրավազան (Ս. Կ.)։

մեկ թալեց, էն անգին քարը ծածկեց։ Նզը դարձավ իրիշկեց, որ անգին քարը չկա. է՛ս տեղ, է՛ն տեղ իրիշկեց, տեսավ ծառի գլուխ մե մարդ կա. էնպեսդ լքնավ, էդ ծառին մե քելլե զարկեց, որ ծառը քոքախան արաց, վիզը մտավ փորը, ընկավ, սատկավ։

Տղեն իջավ, քարը վերցրեց. ընկավ մե բարակ ճանրախ գնաց. գնաց-գնաց մե դուզ տեղ, տեսավ մե թող, տուման ըլլում ա, ասաց. «Տե՛ր աստված, էս ի՞նչ ա, խաթեն[1] ընձնից չի՛ զատանըմ»։

Գնաց տեսավ մի դաստա մեյմուն-են կաղնած. մե դաստա էլ թազի[3] են կաղնած, կռիվ անըմ են։ Տղեն տեսավ որ թազիքը մեյմուններին զոռ են անըմ, ուր կորալը քաշեց, գնաց մեյմունների քամակը կայնավ. թազիքներին ջարդեց, սրպանեց, փախցրեց. ամենքը մե չոլ էցգեց։

Մեյմունները էկան, ժողնըվան վրը տզին. փեշերից ձեռք էցդեցին, բռնեցին ու գնացին ուրանց ջոշ թաքավորի կուշտ, ուրանց լեզվով թաքավորին խասկցրին. «Էս մարդը մեզի ազատեց էն գալըմների ձեռքեն»։

Թաքավորը ասաց.— Ի՞նչ տանք ըդու խալաթ, օսկի՞, թե անգին քար։

Մեյմունները լայեղ չտեսան. թաքավորը բերեց ուր աղչիկը տվեց էդ տզին։

Տղեն մի ժամանակ էդտեղ մնաց, միտք արաց. «Ըստե մնայը ընձի ձեռք չտա, դառնամ էթամ, տեսնամ իմ մերն, իմ կնիկ մեռա՞ն, թե ապրան»։

Էլավ հետ դարձավ, ընկավ ճանրախ էկավ թրխ տունը։

Էկավ-էկավ խասավ մե մեշի. ընտեղ ծառի տակ տեսավ մե մարդ նստած ա։

— Բարի օր քե՛,— ասաց,— խորոխբերս։

— Բարո՛վ, հազար բարով, թաքավորի տղա։

Թաքավորի տղեն միտք արաց. «Կըլլի թե էսի իմ խոր ճանչնըմ ա, ընդու իմ անուն իմացավ»։

— Խաց ունե՞ս, անոթի եմ,— ասաց տղեն։

---

1 Փորձանք (Ծ. Բ.)։

2 Կապիկ (Ծ. Բ.)։

3 Բարակ (Ծ. Բ.), որսորդական շան տեսակ (Ծ. Կ.)։

— Խաց էլ ունեմ, փառք ասու, ջուր էլ, հ'ըմա ոտ չունեմ, կունտ եմ. արի' ընձի շլկա էթանք, մեր տունը էս դարի տակն ա, քեզի խա'ց էլ տամ, շո'ւր էլ տամ, պատիվ էլ անեմ։

Տղեն միամտավ, էկավ ըդուրը շլկեց։

Ըդուր հնարք, ֆենտ ուներ, մեջկպից ցածր ղայիշ էր, վերևը իսանաթ էր, անունը Փոկոտն[1] (Պալտր-ղայիշ)։

Փաթթվավ տղին օտներից չանքի թևերը. էլավ նստավ վզի վրեն։

Մե ամիս տղին շատ չարչրեց, հա' քշեց ըստեղ, հա' քշեց ընտեղ, հա' ջուր բերեց, հա' փետ բերեց՝ չթողեց մե սահաթ դնճրներ։

Մե օր էս տղեն էս չարչրմունքի մեջ դնաց մե դդմի ըռաստ էկավ, մե խոր «ա՜խ» քաշեց։

— Շան որդի',— ասաց Պալտր-ղայիշ ուր վզի վրուց,— ընչի՞ ես «ա՜խ» քաշրմ, չէ' քո խոդին իմ ձեռն ա, դու պըտի պրծնե՞ս իմ ձեռից։

— Աղա',— ասաց տղեն,— գլխիդ ղուրբան, իմ խոր խորակն էս ա, միտքս ընկավ, իդին տա՞ս, էսի անեմ մե կերակուր, ուտենք։

— Դե', շո'ւտ արա, տենանք ինչպեսդ կերակուր ա։

Տղեն դդմի գլոխը կտրեց, մեջը խորդեց, ծառներից խաղող բերեց, մեջը քամեց. դրեց արևը, գնաց։

Էն մեկ օր Պալտր-ղայիշին միտք ընկավ, ասաց տղին.

— Է', շանորդի, քելե', էթանք կերակուրը ուտենք։

Տղեն էկավ դդմի վրեն կայնավ. սկսեց որ ինք առաջ ուտեր էս զատից, Պալտր-ղայիշ տվեց տղին չափալեխի առաջ։

— Շանորդի, ըմալ էղնիս՝ դու ընձնից առա՞ջ ուտես։

— Ջանըմ, աղա, ա'ռ կեր, ընձի մի' սըպանե. դու քու աստված, թե մնաց՝ ես էլ կուտեմ։

Պալտր-ղայիշ կերավ, խմեց, քեֆովցավ. ղայիշները թուլցավ, էկավ ոտներից ընկավ ցածր։

Տղեն աղատվավ. գնաց մե ջրի վրեն շորերը խանեց, լվաց. ըստրկեց, փռեց չորցավ. խագավ, էլավ էկավ որ Պալտր-ղայիշ քեֆը թողեր՝ նստեր ա։

— Բարի օր քեղի,— ասաց,— խորոխբեր։

---

1 Փոկոտն անվանումը բանահավաքինն է, ասացողը անվանում է՝ Պալտրը-ղայիշ։

— Բարո՛վ, խազար բարով էկար, թաքավորի տղա. իմ գըլխին, իմ հ էրեսին։

— Իմ օրս քու ձեռ ի՞նչպեսդ էր, ընձի ի՛նչպեսդ իր չարչրըմ, տրորըմ, բյալքի ես չի, մե անգետ մարդ էր ընկնըմ քո ձեռ, չանքի մեռնելուն պըտի չարչրրի՞ր, քեզի աստված չկա՞։

Թաքավորի տղեն չոմախը խանեց, ընգու գլխի օրթալախը չոմախը իջավ, գլոխը արաց խաղար փշուր. ջանը դժոխքի փայ արաց։

Հ'ընկավ մեշի մեջ, որտե ընդոնցից տեսավ, ջարդեց, սըպանեց. ըդոնց քոքը [1] կտրեց։

Էլավ ընկավ ճանբախ, էկավ թըխ ուրանց երկիրը, խասավ ուր քաղաքի մեջը, գիշերվա կես էր, գնաց ուրանց դուռը, ձեն տվեց։

Կնիկը ձենը լսեց, ուր կեսրոջ ասաց.

— Էս քո տղեդ ա։

— Հա՛, լի՛ըբ, լըբի որդի, միտք ես տվե խըլղի ջհելներին, ասըմ ես «քո տղեդ ա», իմ տղեն էս տաս տարի ա կուրիսեր ա։

Տղեն մեկ էլ ձեն տվեց. կնիկ էկավ դուռը բացեց. տղեն մտավ ներս, մորը բարև տվեց. մերն էլ ճանչըցավ, որ ուր տղեն ա։

— Կնի՛կ,— ասաց տղեն,— էլի՛, մե ճրագ արա, հ'իրար էրես մե տեննանք։

— Քանի դոռ գնացեր ես, մեզի ճրագ չի էլեր,— ասաց։

— Էլի՛, գնա ղրկըցի տնեն մե ճրագ բե, իրար էրես տեննանք,— ասաց տղեն։

— Չէ՛, ես օրգում եմ կերեր, ըսկի գրկեցի տուն չեմ գնացեր, ըսկի էլ չպըտի էթամ, էթըմ ես, դո՛ւ գնա։

Տղեն էլավ քուչի միջով էթըմ էր, հասասները էկան, բռնին, տարան թաքավորի դուռսաղխանեն. գացին թաքավորին ասեցին.

— Քո խաղինի գողն բռներ ենք։

— Շա՛տ լավ եք արեր,— ասաց թաքավորը,— թըղ մնա. սապախտան ըդու դիվանը կանեմ։

Լուսացավ, թաքավորի մտից ընկավ. էդի մե ժամանակ մնաց դուռսաղխանեն։

Թաքավորին մե ցավ պատահավ, կանչեց ուր այամներին, ասաց.

---

1 Արմատ (Ս. Բ.)։

— Էկեք մե էնպեսդ մարդ գտեք, մեկ խոսք ասա՝ ես լամ, մեկ խոսք ասա՝ ես ծիծղամ, բյալքի իմ ցավին մե ազատութեն ըլլի, թը չէ, ձեր հ'ըմբնի գլոխ կկտրեմ։

Այամներից մեկը ասաց.— Թաքավո՛ր, մեզի մհուլ տու իրեք օր, էթանք, շուռ դանք, կրլլի օր գտնենք։

Էդ բանտի վերակացուն էլ էր էդտեղ. մե էրկու օր էդ տղին խաց չէր տարեր, անոթի էր մնացեր տղեն։

Վերակացուն էլավ խաց տարավ։

— Դու աստված չունի՞ս,— ասաց տղեն,— բռնավո՛ր եմ, թաքավորի բռնավորն եմ, ընձի ընչի՞ խաց չես բերըմ։

— Թաքավորի տուն աստվա՛ծ ավերա, էնպե՛սդ շփոթութեն էցգեր ա մեր մեջն...

— Ընչի՞ խամար։

— Ընդու խամար՝ մե մարդ ա ուղըմ, ասըմ ա. «Ընձի մե մարդ գտեք, մե խոսա՝ ես լամ, մե խոսա՝ ես ծիծղամ»։

— Էդի ես իմ, գնա՛ Թաքավորին ասա՛, մե խոսք ասեմ՝ թաքավորը լա, մե խոսք ասեմ՝ ծիծղա։

Բանտի վերակացուն գնաց թաքավորի առեջ կայնավ։

— Է՛, ի՞նչ ա,— ասաց թաքավորը։

— Էն մարդն որ դու ասըմ ես, բռնատուն բռնված ա։

— Գնա՛ խան. ա՛ռ արի։

Գնաց թաքավորի տղին բռնատնից խանեց, առավ, էկավ թաքավորի դիվանխանեն. ձեռ բռնեց, կայնավ։

— Դո՞ւ ես, որդի,— ասաց թաքավորը։

— Ես եմ, թաքավոր ապրած։

— Արի՛, նստի, խոսա տենա՛մ։

Տղեն սկսեց ուր գլխից անցած բաներ խոսալ[1]։

Ասաց.— Ես շատ հարուստ էի, ունեի անսպառելի ինչք, շատ լավ բարեկամներ, սրտակից ընկերներ, որոց հետ ձի կնստեի, զվարճալի վայրեր կգնայինք, կեր ու խում կանեինք, կուրախանայինք։

---

1 Այս տեղեն հեքիաթի պարունակությունը պիտի կրկնվեր զոր ավելորդ համարած էի գրի առնելու միջոցին, սակայն ըստ պահանջման մեծ գիտնական պ. Գր. Խալաթյանի լրացուցած եմ, բայց գրական բարբառով (Ծ. Բ.)։

— Թաքավո՛ր ապրած, եթե դու լինեիր իմ տեղ, ի՞նչ պիտի անեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի. իսկ շարունակե, որ լամ։

— Իմ ամբողջ կարողությունը ծախսեցի-վատնեցի, իմ լավ ընկերներու սիրտը շահելու համար, այլևս ինձ մի փարա անդամ չմնաց. սակայն հույսս դրած լավ ընկերներուս վերա՝ շարունակեցի նոցա հետ ուրախության գնալ, բայց ընկերներս երես դարձուցին, գիս չարաչար ծեծեցին, հետ դարձուցին։

— Թաքավոր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի լայի. իսկ շարունակե, որ ուրախանամ։

— Տեսա, զգացի իմ անխոհեմ ընթացքը. միտք արի՝ Երուսաղեմ գնալ և աստուծմե շնորհ խնդրել։ Ճանապարհ ընկա, մե կարավանի պատահեցա։ Կարավանապետը բարի մարդ էր, գիս վստահացուց, որ ապահով տանի Երուսաղեմ և վերադարձնե։ Ճանապարհի կեսը կտրեցինք, ես ուրախ էի՝ որ փափագիս պիտի հասնեմ։

— Թաքավո՛ր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի, իսկ ասա, որ տխրեմ։

— Դու մի՛ ասեր, ես քարավանապետին ծանր բեռ եղած եմ։ Մի առավոտ զարթեցա, տեսա որ քարավանապետ առանց ինձ իմաց տալու, թողած է գիս քնո մեջ ու գնացած։

Մնացի մենակ, անծանոթ անտառին մեջ. ճանապարհս կորուսի. հաց չկա, գիշերը քնելու ապահով տեղ չկա։

— Թաքավոր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Իհարկե պիտի տխրեի, իսկ շարունակե, որ ուրախանամ։

— Ես փրկության մի նշույլ կորոնեի. մութ և ահռելի անտառին խորը պատահեցա մի հովվի, որ գույնզգույն ծաղկանց և կանաչ մարգագետնո մեջ յուր հոտը կարածեցներ. փրկության հույսս լմցված տեսնելով՝ անբավ ուրախացա. ուրախանալով դիմեցի դեպի հովիվն։

— Թաքավոր ապրած, դո՛ւ լինեիր ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի, իսկ շարունակե, որ տխրեմ։

— Անոթութենե աչքերուս լույսը գացած՝ հասա հովվին, հաց խնդրեցի. իսկ նա ինձ ասաց. «Արի, նստի իշու վերան, գնանք տունս»։ Ես անխոհեմաբար նստա. դու մի՛ ասեր այս հովիվն քելլեգյող մարդակերներեն էր, իմ ոտներ իշու փորու տակեն կապեց, որ

ես խույս չտամ։ Զիս տարավ յուր քարայրը, դռան առաջ դրված մեծ ժայռը մի կողմ առավ, տարավ ներս, ուր երեսուն հոգի ես կային, որոնցմե մին զարկեց շամփուրի, կրակի վերան խորովեց, կերավ. իսկ ես, որ ականատես էի այդ դժբախտ մարդու շարաշար վախճանին, դիտե՞ս, ի՞նչ եղա, մանավանդ կմտածեի, որ մի օր ես ինձ պիտի պատահի։

— Հարկավ պիտի սարսափեիր, իսկ շարունակե, որ ուրախանամ։

— Ես ես դիտե՞ս, ինչ արի, քելլե-դյոզին ուշադրություն դարձուցի, երբ նա ընկավ խոր քնո մեջ, սողալով գնացի ընկերներուս մոտ, ասացի. «Ազատել մեռնելու օր է, ձեր ատամներով կրծեք իմ կապերս։ Քսանութ մարդու ատամներն կրծելով թափավ, իմ կապերս ես կարեցավ։ Սակայն այս-այն կողմ ման եկա, դուրս գալու ինար չկար. մեծ ժայռն դեմ տված էր քարայրի դռան։ Դիտե՞ս, ինչ արի. գնացի այն շամփուրը առի, կրակի մեջ տաքացուցի, ուժով մղեցի քելլե-դյոզի աչքին. աչքը փլխավ. շամփուրն մխվեցավ գետին։ Քելլե-դյոզն վեր թռավ. «Թաքավորի՛ տղա, քու բաներն է՛ն,— ասաց. լափլփելեն[1] այս-այն կողմ որոնեց դիս, իսկ ես առջևեն խույս կտայի միշտ։ Նա առավոտյան հոտը դուրս հանեց որ զիս գտնե, ես մտա նոխազի կաշիի մեջ, նրա շենքի[2] տակեն անցա։ Երբ դուրս էլա, ձայն տվի. «Շա՛նորդի, պրծա քեզնե»։ Իսկ նա ետևես վազեց, ժայռեն գլորեցավ, եղավ հաղար կտոր։ Նա մի չոմախ ուներ ակունքով պատած, առի, գնացի այն մարդիկը արձակեցի. նորա ապրանքն ես հանձնեցի նոցա. իսկ ես երբ դիս աշատված դտա, շատ ուրախացա։

— Թաքավո՛ր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի, շարունակե, որ լամ։

— Ես անտառին մեջ ճանապարհս շարունակեցի, դարձյալ մոլորեցա, հաց չունեմ. գազաններբ չորս կողմս առին, արջեն կփախչիմ՝ գայլի ձեռք կընկնիմ, գայլեն կփախչիմ՝ առյուծի ձեռք. փախա, ելա ծառը. ծառեն չեմ կարող ցած իջնել, գիշերը քուն չունիմ, լոթ օր սոված, անքուն, գազաններու սարսափեն կուլայի։

— Թաքավո՛ր ապրած, դո՛ւ լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

---

1 Խարխափելով (Ս. Բ.)։

2 Քայլի (Ս. Բ.)։

— Հարկավ պիտի տխրեի, ասա, որ ուրախանամ։

— Գազանները հեռացան, որոց սարսափեն չէի կարող իշնել ցած. տեսա մի եղնիկ եկավ ծառի տակ. բերնեն մի անգին քար հանեց, ջուր խմեց, դարձյալ առավ բերանն, գնաց։ Մտածեցի դարձյալ կգա։ Իշա, տղմե երեք խուփ շինեցի, հետևյալ օր եղնիկն եկավ, քարը հանեց. խուփերն վերևեն մի մի վայր ձգեցի, անգին քարը ծածկվեցավ։ Եղնիկն երբ տեսավ անգին քարը չկա, կատաղեցավ, վեր նայեցավ, լքնավ. ծառին զարկեց, շրջեց, ինքն ևս սատակեցավ։ Առի անգին քարը, որ կարժեր միլիոն, ճանապարհս շարունակեցի։ Հեռվեն տեսա մարդիկ անտառին մեջ նստած՝ ուրախ-ուրախ կխաղան. «Այս լավ եղավ,— մտածեցի,— թե անգին քարը շահեցա, և թե կերթամ այն մարդերեն հաց կուզեմ»։

— Թաքավոր ապրած, իմ տեղ լինեիր, ի՞նչ կանեիր։

— Հարկավ կուրախանայի, շարունակե, որ տխրեմ։

— Գնացի այն նստած մարդերեն հաց ուզեցի։ «Որդի,—ասաց մին, հաց ունեմ, սակայն տունն է, ես ոտք չունեմ, զիս շալակե, տար, քեզ հաց տամ, ջուր ևս»։— Գնացի որ շալակեմ, դու մի՛ ասեր, այդ Փոկոտն էր, մեջքեն ներքև փոկ, փոկը փաթութեց իմ ոտներուն, մեջքին, ելավ ուսիս վերա նստավ, սկսավ զիս ապտակել. «Շանորդի՛,— կասեր,— այստեղ գնա՛, այնտեղ գնա՛»,— և այլն։ Ես եղա Փոկոտներու ձեռք գերի, երբեմն մին կնստեր վզիս, երբեմն մյուսը, երբեմն ջուր կբառնային վերաս, երբեմն ցախ կամ փուշ։

— Թաքավո՛ր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի լայի, իսկ շարունակե, որ ուրախանամ։

— Հնարքներ մտածեցի, մի օր գնացի գդմի մոտ, հառաչեցի. «Շանորդի՛,— ասաց,— ինչո՞ւ կհառաչես», ասացի. «Հորս կերակուրը այս դդումն էր. տեսա, միտս ընկավ»։— Փոկոտն ինձ մի ապտակ զարկեց. «Շանորդի՛,— ասաց.— պատրաստե՛, ուտեմ»։— Դդումը ծակեցի, մեջը խաղողի ջուր քամեցի, մնաց երկուերեք օր, Փոկոտն ինձ մի ապտակ զարկեց, ասաց. «Գնա՛, կերակուրը ուտենք»։ Գնացինք, ձեռք զարկի ուտեմ. մի ապտակ ևս զարկեց. ասաց. «Ես չկերած դու ի՞նչպես կհամարձակիս ուտելու»։ Դդումը կերավ, խաղողի ջուրը խմեց, թուլացավ. արձակվեցավ ընկավ. որ ընկավ, գոմբալով մի հարված տվի սպանեցի, պրծա։

— Թաքավո՛ր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ կուրախանայի, շարունակե, որ տխրեմ։

— Անտառին մեջ պատահեցա կապիկներու և բարակներու պատերազմին, կապիկներուն կողմ բռնեցի, երկու-երեք օր պատերազմեցանք, բարակներ մեր վերա զորեցին, սպանեցին մեր զորքերն. իմ չորս կողմս ես պաշարեցին. մնացի թե կատաղի բարակներու ձեռքը և թե արյան հեղեղի մեջ։

— Թաքավոր ապրած, դո՛ւ լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի տխրեի, շարունակե, որ ուրախանամ։

Ուժս հավաքեցի, հարված հարվածի վերա տվեցի. հաղթեցի, բարակներն երկրեն հանեցի։ Կապիկներն զիս տարին թաքավորին, որ վարձատրե։ Բերին զիս թաքավորի աղջկան հետ պսակեցին, հարսանյաց ամեն պատրաստություն տեսան, կերանք խմեցինք, ուրախացանք։

— Թաքավոր ապրած, դո՛ւ լինեիր, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի. ասա, որ տրտմեմ։

Մի ժամանակ մնացի, դարձա, որ տուն գնամ. տեսնեմ կինս, մայրս ո՞ղջ են, ի՞նչ եղան։

Գիշերը հասա տուն, դուռը զարկեցի, ձայն տվեցի։ Կինս մորս ասաց. «Որդիդ եկած է»։ Նա ևս բարկանալով ասաց. «Ա՛յ անառակ, տե՛ս քո ո՛ր մի սիրահարն է»։ Կրկին զարկեցի, վերջապես բացին։

— Ճրագ վառեցեք, իրարու տեսնենք, մեր կարոտը առնենք,— ասացի։— «Ճրագ չկա»,— ասացին։ «Դրացիներեն բերեք»,— ասացի։ «Քանի որ դու գնացած ես, ես դրացու տուն, ուխտ արած եմ, ոտք չդնել, դո՛ւ գնա բեր»,— ասաց իմ կին։

Դուրս ելա որ ճրագ գտնեմ, գիշերապահներն գիս բռնեցին. «Դու թաքավորի գանձարանը կողոպտած ես»,— զիս բանտարկեցին։ Թաքավորի մտքեն էլավ. մնացի բանդին մեջ, կնոջս և մորս կարոտը քաշելով, որոնք ևս չէին գիտեր ի՛նչ եղա, ո՛ւր եմ։

— Թաքավո՛ր ապրած, դո՛ւ լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի տխրեի. շարունակե, որ ուրախանամ։

— Թաքավոր ապրած,— ասաց,— կուզես ուրախացի՝ կուզես տխրե, զիս անմեղ տեղ բանտարկած ես։

Թաքավորը մտածեց, որ սույնպիսի անմեղներ պատժելու պատճառով իրեն այդ ցավը պատահած է. ո՛րչափ անմեղներ կա-

6—2573

լին, քննեց և արձակեց, այս տղին ևս թույլ տվեց, հազար հատ ևս ոսկի տվեց։

Տղան գնաց տուն, ծախեց քելլե-գյոզի չոմախը հազար միլիոնի, այն եզնիկի բերնի անգին քարը՝ հազար միլիոնի։

Նստավ խելքով կառավարվեցավ, այլևս երես չտվեց հացկատակ ընկերներուն։